

**5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ**

**5.1. ՄԱԿ-ի կողմից երաշխավորված ԱՄՀ Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմը (հաստատված ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 30-րդ նստաշրջանում, 05.03.99թ.)**

ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի կողմից հաստատված, ինչպես նաև Միջազգային վիճակագրական ծրագրերի և ներդաշնակեցման Աշխատանքային խմբի կողմից երաշխավորված Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմում ընդգրկված 15 ցուցանիշներից ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը 2014թ. հունվար-մարտին տեղեկատվություն է ներկայացնում հետևյալ 10 ցուցանիշների վերաբերյալ.

**1. Մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռի**  
(հաշվարկված՝ ըստ ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքների)

	Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ
2012 թ. ապրիլի 1-ի դրությամբ <sup>1</sup>	3 022.6	1 572.9	1 449.7
2013 թ. ապրիլի 1-ի դրությամբ	3 028.0 <sup>◇</sup>	1 575.9 <sup>◇</sup>	1 452.1 <sup>◇</sup>
2014 թ. ապրիլի 1-ի դրությամբ	3 012.9	1 567.9	1 445.0

1 000 մարդ

**2. Առկա բնակչության թվաքանակն ըստ սեռի**

	Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ
2011 թ. հոկտեմբերի 12-ի դրությամբ	2 871 771	1 525 042	1 346 729

մարդ

**3. ՀՀ բնակչության կյանքի սպասվող տևողությունը հաշվարկված ծննդից, ըստ սեռի 2012թ.<sup>2</sup>**

	Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ
Հայաստանի Հանրապետություն	74.3	77.5	70.9
Քաղաքային	74.3	77.6	70.8
Գյուղական	74.2	77.4	71.0

տարի

**4. Մանկական մահացությունն ըստ սեռի (մինչև 1 տարեկան)**

	Ընդամենը	Աղջիկներ	Տղաներ
2012թ. հունվար-մարտ	12.9	11.5	14.0
2013թ. հունվար-մարտ	8.8 <sup>◇</sup>	7.8 <sup>◇</sup>	9.6 <sup>◇</sup>
2014թ. հունվար-մարտ	8.3	7.4	9.1

1 000 կենդանի ծնվածի հաշվով

**5. Երեխաների մահացությունն ըստ սեռի (մինչև 5 տարեկան)**

	Ընդամենը	Աղջիկներ	Տղաներ
2012թ. հունվար-մարտ	14.4	12.6	15.9
2013թ. հունվար-մարտ	10.1 <sup>◇</sup>	8.9 <sup>◇</sup>	11.2 <sup>◇</sup>
2014թ. հունվար-մարտ	9.9	8.9	10.8

1 000 կենդանի ծնվածի հաշվով

<sup>1</sup> Վերահաշվարկվել է՝ ըստ ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքների:

<sup>2</sup> Տարիների այն թիվն է, որ ծնվող սերունդը միջին հաշվով կապրի, պայմանով, որ այդ սերնդի ողջ կյանքի ընթացքում մեկ տարիքից հաջորդին անցնելիս մահացությունը՝ յուրաքանչյուր տարիքում հավասար կլինի բնակչության մահացության տվյալ ժամանակահատվածի մակարդակին:

6. Մայրական մահացության գործակիցը, 100 000 կենդանի ծնվածի հաշվով, 2013թ. հունվար-մարտին կազմել է 20.9 (2 դեպք), իսկ 2014թ. հունվար-մարտին մայրական մահացության դեպք չի գրանցվել:

7. Ուսումնառության միջին տևողությունը դպրոցներում 2013/2014 ուսումնական տարում կազմել է 12 տարի:

12. ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2013թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 1 413 929 դրամ (3 452 ԱՄՆ դոլար կամ 2 599 եվրո):

14. Գործազրկության մակարդակը<sup>1</sup> 2013թ. հոկտեմբեր-դեկտեմբերին (IV եռամսյակ) կազմել է 16.2%, ընդ որում կանանցը՝ 17.5%, տղամարդկանցը՝ 15.0% (մանրամասները տե՛ս էջ 98-ում):

15. 2013թ. հոկտեմբեր-դեկտեմբերին (IV եռամսյակ) տնտեսության մեջ զբաղված<sup>1</sup> է եղել ՀՀ բնակչության 38.7%-ը, այդ թվում կանանց՝ 34.1%-ը և տղամարդկանց՝ 44.0%-ը:

---

<sup>1</sup> Ցուցանիշը հաշվարկվել է ՀՀ ԱՎԾ կողմից իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության արդյունքների հիման վրա: